

**Կրտսեր դպրոցականների սոցիալական ակտիվության բաղադրիչների  
ձևավորման մանկավարժական պայմանները**

*Քարմիլե Վիրաբյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-155>

*Հանգուցային բառեր. գործընթաց, գիտելիք, կարողություն, հմտություն, փոխգործակցություն, հետաքրքրություն, հաղորդակցում, ամբողջական համակարգ*

**Նախաբան**

Հայ իրականության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և գաղափարական վերափոխումները տարբեր պահանջներ են առաջադրում անհատի սոցիալական զարգացման մակարդակի բարձրացմանը: Շրջակա միջավայրի հետ փոխգործակցությունը երեխաների սոցիալական կյանքի ձևավորման ամենահարատապ խնդիրներից է: Նման իրավիճակը ստեղծում է անբարենպաստ պայմաններ երեխայի սոցիալական ակտիվության բաղադրիչների զարգացման համար և անհրաժեշտություն է առաջացնում վերահսկել կարգավորվող սոցիալականացման գործոնների ազդեցությունը այս գործընթացի վրա:

Հոդվածի գիտական նորույթը այն է, որ սահմանվում է սոցիալական ակտիվության բաղադրիչների էությունը, որը բնութագրվում է որպես սոցիալական գիտելիքների, սոցիալական գնահատականների և փորձի, սոցիալ-կամային ձգտումների և գործողությունների ամբողջական համակարգ, որն արտահայտվում է հասարակության, այլ մարդկանց և իր անձի նկատմամբ վերաբերմունքով:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցական տարիքը համարվում է տարրական գիտելիքների ձեռքբերման ամենակարևոր ժամանակահատվածը, որն էլ հիմք կհանդիսանա սոցիալական ակտիվության բաղադրիչների հետագա ձևավորման համար:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել դպրոցականների սոցիալական ակտիվության բաղադրիչների ձևավորման մանկավարժական պայմանները, որոնք իրականացնում ենք՝ նրանց տարիքային և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով: Այդ գործընթացը կախված է հուզական վիճակներից և անձի կողմնորոշումից, սոցիալական արժեքների նկատմամբ վերաբերմունքից և դրանց իրականացման անհրաժեշտությունից:

**Սոցիալական ակտիվության ձևավորման բաղադրիչները**

«Սոցիալական ակտիվություն» հասկացության սահմանումը ուսումնասիրված է խորությամբ, իսկ հոդվածում կփորձենք ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի փոխգործակցության ուղղությունները՝ կիրառելով դպրոցականների սոցիալական ակտիվության ձևավորման բաղադրիչները:

Մեր ուսումնասիրած խնդրի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության մեջ (Т. Н. Мальковский, И. С. Марьенко, А. В. Мудрик, Л. Ф. Спирина, Л. И. Уманский և այլք) ակտիվությունը դիտարկվում է որպես անհատի ակտիվ

վերաբերմունքն աշխարհին, նյութական և հոգևոր արժեքներին, միջավայրի սոցիալապես նշանակալից վերափոխումներ կատարելու ունակությանը և մարդկության պատմական փորձի յուրացմանը: Ակտիվությունը ենթադրում է սուբյեկտների, միջավայրերի, գործունեության ձևերի ընտրողականություն, որն արտացոլվում է նախատեսված առաջադրանքն իրականացնելու օպտիմալ ուղիների ընտրությամբ: Մարդու ամեն մի գործունեություն չէ, որ համարժեք է նրա ակտիվ դիրքին: Անհատի սոցիալական ակտիվությունը ենթադրում է ոչ թե հաշտարար, այլ քննադատական վերաբերմունք իրականության նկատմամբ և այդ իրականության մեջ կատարվող փոփոխությունները ինքնուրույն ընկալելու մշտական կարիք, կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու ցանկություն: Կյանքի պասսիվ դիրքը դեռևս չի նշանակում անգործություն: Այս դիրքորոշման էությունը վախն է, կողմնորոշումը դեպի մտածողության կարծրատիպերը և սեփական նախաձեռնության մերժումը: Պասսիվ դիրքորոշումը կարող է նույնիսկ ուղեկցվել առաջադեմ նորարարությունների նկատմամբ դրական վերաբերմունքով, բայց միայն այն դեպքում, երբ դրանք ի վերուստ արտոնված են, և կարիք չկա դրանց համար պայքարել, ռիսկի դիմել կամ պատասխանատվություն կրել:

Ըստ Ե. Բ. Շերբակովայի և Տ. Ն. Շերբակովայի՝ սոցիալական ակտիվությունը կարող է պարունակել երեք հիմնական բաղադրիչ.

1. **հուզարժեքային բաղադրիչ**, որն իր մեջ ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են հուզական վերաբերմունքն իր նկատմամբ, համոզմունքներ, անձնային արժեքներ, որոնք կատարում են աշակերտների հետաքրքրությունների և հակումների գործառույթ՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս. ինքնաիրացումը, անձնական աճը և այլն,

2. **ճանաչողական բաղադրիչ**, որը ներառում է պատկերացում սոցիալական արժեքների մասին, սոցիալական նշանակալի գործունեության իրականացում և վարքի սոցիալական նորմեր,

3. **արդյունավետ-վարքային** բաղադրիչ, որն էլ առանձնացնում է ներքին և արտաքին գործողությունները՝ հմտությունները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են սոցիալապես արժեքավոր գործունեություն իրականացնելիս [7]:

Ըստ Գ. Ա. Ուրունտանի և Յու. Ա. Աֆոնկինայի՝ սոցիալական ակտիվության ճանաչողական բաղադրիչը մեզ տալիս է շրջապատող աշխարհի մասին նոր գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն: Սոցիալական ակտիվության ճանաչողական բաղադրիչը երեխայի մտավոր ոլորտի գործունեությունն է, որից լիովին կախված է նրա կրթության որակը:

Սոցիալական ակտիվության հուզարժեքային բաղադրիչը անհատականության գիծ է, որը մղում է երեխային ակտիվորեն շփվել սոցիալական միջավայրի հետ: Կան որոշակի անձնական հատկություններ, որոնք անհատին դարձնում են սոցիալապես ակտիվ մարդ [6]:

Տեսական ուսումնասիրություններից կարող ենք եզրակացնել, որ դպրոցականների սոցիալական ակտիվությունը որոշակի ճանաչողական, հուզարժեքային և արդյունավետ վարքագծային գործունեություն է, որն արտացոլում է կրտսեր դպրոցականի հարաբերությունները հասարակության հետ:

Այս բաղադրիչների ձևավորման գործում՝ որպես մանկավարժական պայման, կարևորում ենք ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: Խոսելով դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունների մասին՝ նախ և առաջ հարկ է նշել, որ դրանք պետք է հիմնված լինեն փոխկապակցման, փոխադարձ շարունակականության սկզբունքների վրա: Ուսումնական գործունեության մեջ կարևոր են փոխլրացումը, գործառույթների չսահմանազատումը, ուսումնական գործընթացի խորացումը: Կրթության և դաստիարակության որակի բարձրացման միակ ճիշտ ճանապարհը մանկավարժների և ծնողների համատեղ գործունեությունն է:

Դպրոցականների սոցիալական ակտիվության դաստիարակությունը, ըստ ուսումնասիրությունների (Н. Ф. Басова, А. Э. Мельникова, З. И. Равкина, Н. Ю. Наркевич), հնարավոր է միայն ընտանիքի և ուսուցչի ջանքերը համատեղելով, քանի որ նրանք նույն երեխաների դաստիարակներն են: Նրանց գործունեության արդյունքը կարող է հաջող լինել, երբ ուսուցիչներն ու ծնողները դառնան դաշնակիցներ: Երեխաների սոցիալական ակտիվության բաղադրիչների առկայությունը հնարավորություն է տալիս, որպեսզի երեխան ընտանիքում ձեռք բերի սոցիալական հարաբերությունների և կապերի իր առաջին փորձը՝ ծնողների, հարազատների, հարևանների, ընկերների, ինչպես նաև բակում խաղացող երեխաների հետ: Սա առաջին միկրոհասարակությունն է, որտեղ ձևավորվում է սոցիալական փորձը: Երեխան մեծանալով աստիճանաբար հաղորդակցման մեջ է մտնում այլ մարդկանց հետ, դառնում տարբեր կոլեկտիվների՝ դասարանի, խմբի, ընկերակցության անդամ, որոնք նույնպես ազդում են նրա անձի ձևավորման վրա [3, 6]:

Դպրոցը միշտ ձգտել է ամրապնդել ընտանիքի մասնակցությունը սոցիալական ակտիվության բաղադրիչների իրականացմանը: Ներկայիս իրավիճակը հուշում է, որ ընտանիքները և դպրոցների ուսուցչական անձնակազմը փորձում են այդ պարտականությունները բարդել միմյանց վրա՝ պատճառաբանելով առաջինների զբաղվածությունն ու վերջիններիս ցածր աշխատավարձը, վարկանիշի անկումը:

Գիտնականների կարծիքով՝ ընտանիքի և դպրոցի փոխազդեցությունը ծնողների և աշակերտների կյանքի, շրջակա միջավայրի հետ մեծացնում է նրանց կրթական ներուժը, ինչը դառնում է սոցիալականացման, սոցիալական աջակցության և անձնական պաշտպանության հզոր միջոց: Ընտանիքը հանդես է գալիս որպես առաջնային դաստիարակչական ինստիտուտ, նրա հետ երեխան կապված է լինում իր ողջ կյանքի ընթացքում [3, 6]:

Հիմնվելով մանկավարժական և հոգեբանական գրականության վերլուծության վրա՝ առանձնացնել ենք դպրոցի և ընտանիքի միջև փոխգործակցության հետևյալ սկզբունքները, որոնք հնարավորություն կտան սոցիալական ակտիվության բաղադրիչների իրականացմանը.

1. **Վստահության սկզբունքը** – այս սկզբունքը կարգավորում է մեծերի և երեխայի հարաբերությունները և ենթադրում է, որ դրանք կառուցվում են վստահության, փոխհարգանքի, համագործակցության, սիրո, բայրացկամության վրա:

Այս սկզբունքի կիրառման հիմքում ընկած է վստահությունը երեխայի նկատմամբ, որի շնորհիվ նա գիտակցում է իր ազատության սահմանները և կարևորությունը,

2. **մատչելիության սկզբունքը** – այն ապահովում է հարմարեցված և մշակված տեղեկատվության օգտագործումը՝ հաշվի առնելով ուսուցիչների և ծնողների ընկալման առանձնահատկությունները,

3. **համակարգվածության սկզբունքը** – որի իրականացումն ուղղված է ամբողջական մանկավարժական գործընթացում երկու սուբյեկտների հետևողական փոխգործակցությանը: Երեխան դաստիարակվում է ամեն քայլափոխին և կյանքի ամեն պահին,

4. **համագործակցության սկզբունքը** – դպրոցականների հետ աշխատելու երկու տարբեր ներկայացուցիչների համատեղ գործունեություն,

5. **մարդասիրության սկզբունք** – ծնողների խնդիրն է սովորեցնել երեխային հիվանդագին չընդունել շրջապատող մարդկանց այն վերաբերմունքը, որոնք ձգտում են մարդասիրական առաքելություն կատարել [2, 96]:

Փոխադարձ հաղորդակցության գործընթացում ոչ միայն ուսուցիչները պետք է ծնողների ուշադրությունը հրավիրեն ընտանեկան կրթության մեթոդների և բովանդակության թերությունների վրա, այլև ծնողները՝ ուսուցիչների ուշադրությունը դպրոցի աշխատանքում նմանատիպ «անհաջողությունների» վրա: Այնուամենայնիվ, փոխադարձ հաղորդակցությունը պետք է լինի կառուցողական:

Ուսումնասիրելով ընտանիքի և դպրոցի փոխազդեցության առանձնահատկությունները՝ որպես կրտսեր դպրոցականի սոցիալական ակտիվության բաղադրիչների ձևավորման ինստիտուտներ, անդրադառնանք կրտսեր դպրոցական տարիքին և դիտարկենք դպրոցականների սոցիալական ակտիվության ձևավորման բաղադրիչները՝ ըստ նրանց տարիքային հատկանիշների:

Կրտսեր դպրոցական տարիքում գործունեությունը՝ որպես բնական կարողություն, վերածվում է կարիքների և հետաքրքրությունների սոցիալական համակարգի: Սոցիալական ակտիվության բաղադրիչները ներառում են.

1. սոցիալական երևույթների իրագրկում, որոնք կազմում են հասարակության սոցիալական և բարոյական արժեքների փոխհարաբերությունների օբյեկտիվ կողմը,
2. ընդգրկվածություն ակտիվ գործունեության մեջ, որն ունի սոցիալական արժեքավոր ուղղվածություն:

Կրտսեր դպրոցականի զարգացման սոցիալական իրավիճակի փոփոխությունը կապված է մեծահասակների աշխարհին միանալու նրանց ակտիվ ցանկության, նորմերի և արժեքների նկատմամբ վարքագծի կողմնորոշման հետ:

Կրտսեր դպրոցականի սոցիալական ակտիվության բաղադրիչների ձևավորումը բարենպաստորեն տեղի է ունենում հուզական վերելքի մթնոլորտում, այլ մարդկանց հետ փոխգործակցության գործընթացում, գործունեության կազմակերպման բարձր մակարդակով: Մովորողների սոցիալական ակտիվության բաղադրիչների զարգացնելու համար արդյունավետ աշխատանքի անհրաժեշտ պայմանը կոլեկտիվում նրանց ընդգրկումն է: Որքան ավելի լայն և հարուստ լինի սո-

վորողների շփումը դասարանում, այնքան մեծ հնարավորություններ կան անհրաժեշտ սոցիալական բաղադրիչները զարգացնելու համար: Դասարանում համատեղ գործողությունները ներառում են տեղեկատվության փոխանակում, ընդհանուր նպատակների շուրջ համաձայնություն, փոխադարձ վերահսկողություն, այլ մարդկանց գործողությունների վիճակներն ու դրդապատճառները հասկանալու և դրանց համապատասխանաբար արձագանքելու կարողություն: Արցախից տեղափոխված աշակերտների մի մասը դժվարությամբ հարմարվեցին նոր միջավայրին և դպրոցին: Այստեղ կարևորում ենք ոչ միայն աշակերտների ներգրավվածությունը այդ գործին, այլև ուսուցիչների դերը և մանկավարժական մոտեցումները: Կոլեկտիվ հարաբերությունների փորձի մեջ ձևավորվում է ընկերասիրություն և սոցիալական ակտիվություն, որոնք հիմք են հանդիսանում զարգացնելու իր փոխգործակցությունը այլ մարդկանց հետ: Հաղորդակցվելով հասակակիցների հետ՝ սովորողները ձեռք են բերում առաջնորդության և ենթակայության փորձ, զարգացնում իրենց կազմակերպչական հմտությունները:

Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալական ակտիվության տարբեր բաղադրիչների անհավասար զարգացումը: Ուսուցիչը պետք է ուսումնասիրի աշակերտների առանձնահատկությունները, դասասենյակում կազմակերպի աշխատանքն այնպես, որ բոլոր աշակերտներն այս կամ այն չափով մասնակցեն դրան: Երեխաների աշխատանքի կազմակերպման ամենապարզ տարբերակը հանձնարարություններն են: Առաջին դասարանում այն կարճաժամկետ է և իրադրային բնույթի: Ավագ կրտսեր տարիքում հանձնարարությունները երկարատև են: Հանձնարարությունների հետ մեկտեղ կազմակերպվում են նաև հերթապահություններ: Հերթապահության մեջ սահմանված են այն պահանջները, որոնք ներկայացնում են աշակերտները միմյանց: Հերթապահության գործընթացում ակտիվորեն ներդրվում են ներդպրոցական կարգ ու կանոնի պահանջներ: Անհրաժեշտ է կոլեկտիվում ձևավորել հարգանք հերթապահի պարտականությունների նկատմամբ: Երեխաները ջանում են լավ հերթապահել՝ մեծահասակի գովասանքին արժանանալու համար: Կրտսեր դպրոցականները հետաքրքրություն են ցուցաբերում աշխատանքի նկատմամբ, սակայն նրանք չունեն բավարար փորձ, պակասում են հաստատակամությունը և վստահությունը: Առաջին անհաջողությունները կարող են աշակերտներին հասցնել հիասթափության և բացասական վերաբերմունք ձևավորել այս աշխատանքի նկատմամբ, ինչը նպաստում է այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսիք են պասսիվությունը, անտարբերությունը դասի, դպրոցի, ապա նաև՝ հասարակության նկատմամբ: Ուստի անհրաժեշտ է ջնշակցել ուսուցչին դպրոցականների սոցիալական ակտիվության բաղադրիչների զարգացման, սովորողների շահերը հաշվի առնելով առաջադրանքների բաշխման և հանձնարարված աշխատանքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման գործում:

Աշակերտների սոցիալական ակտիվ դիրքը հաջողությամբ զարգանում է մանկավարժական հաղորդակցության ժողովրդավարական ռճի պայմաններում, երբ ուսուցիչը շահագրգռված է մեծացնել սովորողների դերը փոխգործակցության մեջ, ձգտում է նրանցից յուրաքանչյուրին ներգրավել ընդհանուր խնդիրների լուծմանը,

երբ առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում ինքնաիրացման համար:

Եթե տարրական դպրոցում ուսուցիչը հոգ է տանում աշակերտների նկատմամբ, հարգում է նրանց կարծիքը և հաշվի առնում այն, եթե նրան հաջողվում է դպրոցականներից կազմավորել բարձր կազմակերպված և ակտիվ դասարան, աշակերտները ցուցաբերում են ակտիվություն, ապա այն զարգացում կապրի նաև հետագայում:

Յուրաքանչյուր երեխա, անկախ իր անհատական զարգացման առանձնահատկություններից և պատրաստվածության աստիճանից, որոշակի տարիքի հասնելով, հայտնվում է տվյալ հասարակության մեջ ընդունված համապատասխան դիրքում: Նա հայտնվում է օբյեկտիվ պայմանների համակարգի մեջ, որոնք որոշում են նրա կյանքի և գործունեության բնույթը տվյալ տարիքային փուլում: Երեխայի համար կենսականորեն կարևոր է բավարարել այս պայմանները, քանի որ միայն այդ դեպքում նա կարող է զգալ իր դիրքի բարձրությունը և ունենալ հուզական բարեկեցություն: Երբ երկրորդ դասարանի աշակերտը մեկ այլ դպրոցից տեղափոխվում է ուրիշ դպրոց, որոշ ժամանակ անց հարցնում է ուսուցչին, թե ինքը կարգապահ է, ուսուցիչը մեկ բառով պատասխանում է՝ այո՝ Սա չի բավարարում աշակերտին, քանի որ ինքը չգիտի այդ դպրոցում սահմանված վարքի նորմերը:

Այսպիսով, աշակերտների սոցիալական ակտիվության բաղադրիչների ձևավորման կարևորագույն պայմաններն են դպրոցի և ընտանիքի, դասարանի աշակերտների համատեղ գործունեությունը, որոնք միավորված են ընդհանուր նպատակով՝ առաջնորդության ժողովրդավարական ոճով, սովորողների միջև մարդասիրական հարաբերություններով և կրտսեր դպրոցականների կազմակերպչական հմտությունների զարգացումով:

### **Սոցիալական ակտիվության բաղադրիչները ձևավորող առաջադրանքներ**

Ուսումնասիրություններ իրականացրել ենք տարրական դպրոցի չորրորդ դասարանում՝ թվով 15 աշակերտի հետ: Մեր նպատակն էր պարզել, թե ինչ մակարդակի վրա են գտնվում երեխաների սոցիալական ակտիվություն բաղադրիչները: Մենք իրականացրինք սոցիալական ակտիվության զարգացման հուզարժեքային բաղադրիչի ուսումնասիրություն:

Երեխաներին տրամադրվեցին նկարներ, որոնք պատկերում էին իրենց հասակակիցների դրական և բացասական գործողությունները: Երեխաները պետք է այնպես դասավորեին նկարները, որ մի կողմում լինեին բարի գործեր ունեցողները, մյուսում՝ վատերը: Երեխաները պետք է բացատրեն իրենց ընտրությունը: Հետազոտության հիման վրա ձևավորվեցին 3 խմբեր.

1 միավոր (ցածր) – երեխան ճիշտ է դասավորում նկարները, բայց չի կարող արդարացնել իր գործողությունները. հուզարժեքային ռեակցիաները անբավարար են (արտահայտած մտքերը կցկտուր են),

2 միավոր (միջին) – երեխան ճիշտ է դասավորում նկարները, արդարացնում է իր գործողությունները, հուզական ռեակցիաները համարժեք են, բայց թույլ արտահայտված (չի կարողանում մի քանի նախադասությամբ մեկնաբանել ասելիքը, քանի որ բառապաշարը հարուստ չէ):

3 միավոր (բարձր) – երեխան արդարացնում է իր ընտրությունը (անվանում է բարոյական չափանիշները), հուզական ռեակցիաները համարժեք են, դրսևորվում են դեմքի արտահայտություններով, ակտիվ ժեստերով և այլն (զեղեցիկ և ճիշտ բառերով բացատրում է իր ասելիքը: Նախադասությունները համարժեք են ընտրած չափանիշներին):

Ամփոփելով արդյունքները՝ մենք պարզեցինք, որ մեծամասնությունը՝ վեց աշակերտ, ունի բարոյական զարգացման հուզական բաղադրիչի ձևավորման միջին մակարդակ, հինգ սովորող՝ բարձր, չորս աշակերտ՝ ցածր:

Վարքագծային ակտիվության և բարոյական զարգացման մակարդակը բացահայտել ենք՝ օգտվելով Ա. Ս. Պրուտչենկոյի (փոփոխված ձևով) մեթոդիկայից: Առաջարկեցինք պատասխանել «Իսկական ընկեր» հարցաթերթին [8]: Դուք պետք է պատասխանեք հարցերին՝ ազատ արտահայտելով ձեր մտքերը, առանց երկար մտածելու: Այստեղ լավ և վատ պատասխաններ չկան:

### *Հարցաթերթ*

1. Ունե՞ս շատ ընկերներ, որոնց հետ շփվում ես ամեն օր:
2. Շո՞ւտ ես նեղանում նրանցից:
3. Հե՞ շտ ես նոր ընկերներ ձեռք բերում:
4. Պաշտպանո՞ւմ ես ընկերոջդ նրա բացակայության ժամանակ:
5. Պահո՞ւմ ես վստահված գաղտնիքները:
6. Հե՞ շտ ես հաղորդակցվում քեզանից մեծ երեխաների հետ:
7. Հարգո՞ւմ ես ընկերոջդ կարծիքը:
8. Սիրո՞ւմ ես ընկերներիդ հետ կազմակերպել տարբեր խաղեր և զվարճալիքներ:
9. Նախանձո՞ւմ ես ընկերոջդ:
10. Օգնո՞ւմ ես նրան տնային հանձնարարությունները կատարելիս:
11. Վստահո՞ւմ ես ընկերոջդ:
12. Վստա՞հ ես, որ կներես ընկերոջդ սխալները:
13. Ուրախանո՞ւմ ես ընկերոջդ հաջողություններով և ձեռքբերումներով:
14. Ծննդյան տոնին միշտ նրա կողքի՞ն ես:

Յուրաքանչյուր «այո՛» պատասխանը գնահատվում է 2 միավոր, «չգիտեմ» պատասխանը՝ 1 միավոր, իսկ «ո՛չ» պատասխանը՝ 0 միավոր: Ստացված միավորները գումարվել են: Հարցաշարի արդյունքների հիման վրա մենք աշակերտներին բաժանել ենք 3 խմբի.

### *0-ից 8 միավոր՝ ցածր մակարդակ*

Դուք դեռ լիովին չեք գնահատել ընկերության ամբողջ հմայքն ու առավելությունները: Ամենայն հավանականությամբ, դուք չեք վստահում մարդկանց, ինչը դժվարացնում է ձեզ հետ ընկերանալը:

### *9-ից 16 միավոր՝ միջին մակարդակ*

Ընկերության փորձ ունես, բայց ունես նաև սխալներ: Լավ է, որ հավատում եք իսկական ընկերությանը և պատրաստ եք ընկերություն անել:

### *17-ից 24 միավոր՝ բարձր մակարդակ*

Դու իսկական ընկեր ես, հավատարիմ և նվիրված: Ձերն ու ուրախ է քեզ հետ, ընկերներդ իրենց հանգիստ և վստահելի են զգում, իսկ դու նույն կերպ ես պատասխանում նրանց:

Վարքագծային ակտիվության և բարոյական զարգացման մակարդակը ուսումնասիրելիս մենք մշակեցինք հարցաշարի արդյունքները, որի ընթացքում պարզվեց, որ երեխաների մեծամասնությունը՝ յոթ աշակերտ, ունի միջին մակարդակ, վեց աշակերտ ունեն բարձր զարգացվածություն, իսկ երկուսը՝ ցածր:

Վերջում մենք ամփեցինք երկու առաջադրանքների արդյունքները, որի ընթացքում երեխաների մեծամասնությունը՝ յոթ աշակերտ, միջին սոցիալական ակտիվության մակարդակ ունի, երեք աշակերտ՝ ցածր զարգացման մակարդակ, իսկ հինգ սովորող՝ բարձր:

### **Եզրակացություն**

Կրտսեր դպրոցականների սոցիալական ակտիվության բաղադրիչները զարգացնելու համար անհրաժեշտ է պահպանել մի շարք մանկավարժական պայմաններ.

1. ակտիվ կրթական միջավայրի առկայությունը,
2. երեխաների ինքնաիրացման համար ստեղծագործական միջավայրի ստեղծում,
3. հուզական փորձառության իրավիճակներ,
4. մարդը՝ որպես անհատ, ձևավորվում է ընտանիքում և դպրոցում:

Այս առումով, ընդհանուր նպատակի, ժողովրդավարական ոճի, սովորողների միջև մարդասիրական, կոլեկտիվիստական հարաբերությունների զարգացումը և կրտսեր դպրոցականներին կազմակերպչական հմտությունների ուսուցումը միավորված ընդհանուր նպատակով, դասարանի և ընտանիքի համատեղ գործունեությունը, սոցիալական ակտիվության բաղադրիչները սոցիալապես ակտիվ քաղաքացու հաջողակ կրթության բանալին են:

Մենք գտնում ենք, որ այս աշխատանքը պետք է շարունակվի ուսուցչի և ծնողների համատեղ գործունեության ներքո:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.2-155>

### **Գրականություն**

1. Հարությունյան Ն., Ղազարյան Ա., Ղուկասյան Լ., Սոցիալական մանկավարժություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 336 էջ:
2. Ղուկունյան Գ. Ե., Մանկավարժություն, գիրք 2, Զանգակ-97, Երևան, 2005, 232 էջ:
3. Չատինյան Ա. Ա., Ուոլյան Մ. Ա., Ընտանեկան դաստիարակության հիմունքները, Երևան, 2009, 104 էջ:
4. Левкина Т. И. Воспитание социальной активности детей и подростков в учреждениях дополнительного образования в процессе художественно-творческой деятельности. Владимир, 2014, 94 с.



5. Мудрик А. В. Социальная педагогика: учеб. для студ. пед. вузов. Под ред. В. А. Сластенина. 3-е изд., испр. и доп. Москва: издательский центр «Академия», 2000. – 200 с.
6. Урунтаева, Г. А. Практикум по детской психологии: пособие для студентов пед. училищ и колледжей, воспитателей дет. сада. Ю. А. Афонькина; под ред. Г. А. Урунтаевой. Москва: Просвещение: ВЛАДОС, 1995, -290 с.
7. Щербакова Е. В., Щербакова Т. Н. Способы формирования социальной активности младших школьников, 2019.
8. Анкета-опросник «Настоящий друг» (методика А. С. Прутченкова). Москва, 1996, с. 154.

## **Педагогические условия формирования компонентов социальной активности младших школьников**

***Кармиле Вирабян***

### **Резюме**

***Ключевые слова:** процесс, знание, способность, умение, взаимодействие, интерес, общение, целостная система*

Наше исследование по проблеме формирования компонентов социальной активности младших школьников показало, что в настоящее время разработаны методологические и теоретические предпосылки для решения и совершенствования данной проблемы. Анализ показал, что уточнена сущность социальной активности школьников, которая определяется как когнитивное, эмоционально-ценностное и действенно-поведенческое образование, отражающее отношение школьника к социуму. Исследовано и углублено содержание понятия «социальная активность», которое включает целостную систему социальных знаний и оценок, переживаний, социально-волевых устремлений и поступков, выражающих отношение к обществу, другим людям и самому себе. Определены особенности процесса формирования компонентов социальной активности школьников: возрастные и индивидуальные изменения, эмоциональные состояния школьника и направленность личности. Определены компоненты социальной активности школьников – когнитивный, эмоционально-ценностный и действенно-поведенческий; критерии сформированности социальной активности – объем, глубина и действенность знаний о социальных ценностях, выраженность отношений к социальным ценностям и эмоциональным переживаниям, устойчивость социальных поступков. Критерии сформированности социальной активности проявляются на низком, среднем и высоком уровнях. Определены направления взаимодействия школы и семьи, обеспечивающие процесс формирования социальной активности школьников: воспитательное, образовательное, методическое, социально-педагогическое, технологическое.

## **Pedagogical Conditions for the Formation of Social Activity of Younger Schoolchildren**

*Karmile Virabyan*

### **Summary**

**Key words:** *process, knowledge, ability, skill, interaction, interest, communication, holistic system*

Our investigation into the topic of younger schoolchildren's social activity formation revealed that theoretical and methodological prerequisites have currently been established for the problem's resolution and enhancement. The analysis showed that the essence of social activity of schoolchildren was specified: defined as cognitive, emotional and effective-behavioral education, reflecting the attitude of schoolchildren towards the society. The content of the concept of "social activity", that includes a complete system of social knowledge, social assessments and experiences, social-volitional aspirations and actions expressing the attitude towards society, other people and oneself, has been studied and deepened. The specific features of the formation of social activity of schoolchildren are: age, individual changes, pupils' emotional states and personality orientation. Determined components of social activity of schoolchildren are as follows: cognitive, emotional and effective-behavioral. The criteria for the formation of social activity are the volume, depth and effectiveness of knowledge on social values, the expression of attitudes towards social and emotional experiences, the sustainability of social actions. The criteria of social activity formation are presented at low, medium and high levels. The areas of interaction between school and family that ensure the process of forming the social activity of schoolchildren are defined: educational, methodological, social-pedagogical, technological.

**Ներկայացվել է**

**12.02.2024 թ.**

**Գրախոսվել է**

**01.03.2024 թ.**

**Ընդունվել է տպագրության**

**28.11.2024 թ.**